ԳԼՈՒԽ ԺԲ.

ԴԷՊՔԵՐԸ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, հայկական զօրքերի մի մասը նահանջեց դէպի Սարդարապատ, Երևանի ուղղութեամբ: Այստեղ քիչ յետոյ տեղի էին ունենալու դէպքեր, որոնք բախտորոշ դեր էին կատարելու հայ ժողովրդի կեանքում: Նախ քան այդ դէպքերին անցնելը, սակայն, անհրաժեշտ է կանգ առնել ընդհանրապէս Արարատեան դաշտի անց ու դարձերի վրա — Արարատեան դաշտի, որը, շատ չանցած, կազմեց Հայաստանի Հանրապետութեան պատանդանը:

Ռուսական յեղափոխութիւնը Երևանում էլ ընդունեց ցնծութեամբ: Հին իշխանութիւնը փոխարինուեց նորով, և նահանգի կառավարութիւնը անցաւ Նահանգական Գործադիր Կոմիտէին՝ նախագահութեամբ առաջին շրջանում՝ Սմբ. Խաչատրեանի, ապա՝ Սահ. Թորոսեանի, և Զինուորական Խորհրդի Գործադիր Կոմիտէին — նախագահ Ստարցև: Առաջինը զերազանցապէս զբաղւում էր քաղաքացիական գործերով, երկրորդը՝ զինուորական: Քանի ճակատը կայուն էր, գերակշռող դերը պատկանում էր Զինու. Խորհրդին: Այս երկու մարմինները գործում էին համերաշխ՝ աշխատելով ամուր պահել յեղափոխական կարգն ու ազգամիջեան խաղաղութիւնը և նպաստելով միաժամանակ ռազմաճակատի ուժեղացումին: Ցունիս ամսին կազմուեց և Հայ Զինուորական Միութիւնը, բժ. Ց. Մելիքեանի նախագահութեամբ, որ բաւական կարեւոր դեր կատարեց յետագային:

Յեղափոխութեան առաջին ամիսներին Երևան քաղաքի և նահանգի կեանքը ընթանում էր, համեմատաբար, խաղաղ): Տիրում էր համերաշխութիւն հայերի և թուրքերի միջև. երկու ազգերի մտաւորական ներկայացուցիչները գործում էին ձեռք-ձեռքի: Սակայն, հետզհետէ դրութիւնը սկսեց փոխուել. թիւրքերի և թուրք ազգայնականների դրդռումով այստեղ ու այնտեղ սկսեցին դլուխ բարձրացնել քրդերը, յարձակուել ու թալանել երկաթուղին և խճուղիներով անցնող պարենակիր սայլերը, կողոպտել ու սպանել հայերին: Սկսեցին շարժուել և թուրք դիւղերը, մանաւանդ ռազմաճակատ տանող ճանապարհների և հանդուցային կէտերի վրա:*

---

*) Առ 1 յուն. 1916թ., պետական վիճակագրութեան համաձայն, Երևանի նահանգում ապրում էր 1,120,242 բնակիչ, որից հայեր՝ 669,871, թուրքեր՝ 373,582, քրդեր՝ 36,508, ռուսներ՝ 16,103, եզիդիներ՝ 12,624 և այլն: Երևան քաղաքում հաշուում էր 51,286 բնակիչ, որից 37,204 հայ, 12,557 թուրք, մնացածը՝ ռուս, վրացի, հրէա և այլն («Кавк. Календарь», 1917г., стр. 214—221):